


181.271

ԱՐԵՎԱՏՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԴՅՈՒՆԴԱԿԱՆ

Հ Ր Ա Մ Ա Բ Ո Ւ
Գ Ե Հ Ո Ւ Ո Ւ Հ Ո Յ Ո Ւ Տ Ւ



Տպարան „Շիրոկ“ Ալեքսանդրական

1908
(37)

Дозв. Цензурою Тифлисъ 4 Января 1906 года.

ԱՅՆ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՅԻ

Հաս բարձու հրամանի Նորին ս. Թօնոքեան Վե-
նակառ Հայրապետի ազգին Տ. Տ. Մկրտչի Ա., Դի-
ւանս քոլլատրէ գտպագրութիւն „Նախազիծ Հայաս-
տանեայց եկեղեցու կանոնադրութեան“:

Դիւանապետ ՅՈՒՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

2 Յունիարի 1906 ամի

՚ի Ռ. Տիկոնի

թ. 2

Կ Ն Ի Գ

Ա Ռ Ա Զ Ե Բ Ա Ն

Ներկայ աշխատութիւնս, որ մի խիստ պատասխանատու գործ է, չենք յանդգնի ասել, թէ հեռի է պակասութիւններից։ Կան թերութիւններ, որ ինքներս նկատելի ենք. կան տեղեր, ուր մենք լրիւ չենք արտայայտել մեր ամբողջ միտքը, սակայն գրանց մի մասն եղել են որոշ գիտաւորութեամբ։ Այդպիսի կէտերը, որոնց մասին մեր անձնական համոզումը կանոնի չենք վերածել, կարող էին և պէտք է մտնին նախագծի մէջ այն ժամանակ, երբ հարցերի քննութիւնից դուրս գայ, որ գոքա ժամանակի պահանջներ են։

Վերցնենք հէնց այս մի կէտը. — Նախագծիս մէջ խօսելով էջմիածնի Կենդրոնական Խորհրդի մասին, չեմ որոշել, թէ նրա հոգևորական անդամները ովքե՞ր են լինելու. կուսակրօններ—վարդապետներ, եպիսկոպոսներ—թէ առհասարակ իւրաքանչիւր հոգեորական, լինի նա եպիսկոպոս, վարդապետ կամ քահանայ։ Նոյնն եմ արել և փոխանորդների նկատմամբ։ Ենքս անձամբ այն համոզմանն եմ, որ եկեղեցու վարչութիւնը բացառապէս կուսակրօնների մէջ չպիտի կենդրոնանայ։ Եւ

իրօք ինչու մի կըթւած, արժանիքի տէր քահանայ չի կարող առաջնորդ լինել, կամ ընտրւել, մինչգեռ նոյն պաշտօնը թուլատրելի է մի վարդապետի կամ տղէտ եպիսկոպոսի, որ եթէ այդ կոչումը չունենա՞ր, կարող էր լաւ խոհարար կամ ժամար լինել, իսկ աջող դէպ-քում մանրավաճառ։ Զէ որ մեր այժմեայ թեմական առաջնորդներից մէկը (զարաբաղինը կարծիմ) գրաշարէ եղել, որը միայն կարող էր նրան ստատիւ բերել. մինչ-գեռ առաջնորդութեան համար յարմար կլինէր ոչ թէ նա, այլ մի կըթւած մարդ։ 'Ի հարկէ, այդպիսի լուրջ խնդիրներ քննութեամբ և մամուլի միջոցով չի լուծւիլ, այլ միայն հող կպատրաստի։ Դրանց լրւծողը կանոնա-գիր ժողովը կարող է լինել, կամ կեանքը, այլ կերպ առած սովորոյթի իրաւունքը, որ այնքան կենդանի գործօն է եղել մեր եկեղեցու պատմական կեան-քում։

Մի ուրիշ կէտ։—Մեր ննթագրութեամբ հայրապե-պական ընտրութիւնների համար Ռուսահայերը բաժան-ւում են ընտրական 40 մանր շրջանների, որի հիմամբ մօտաւորապէս իւրաքանչիւր 35,000 հայ ազգաբնակու-թիւն հայրապետական ընտրութիւններին ուղարկում է մի աշխարհական պատգամաւոր, մինչգեռ թեմերի նոյն իսկ մեր բաժանմամբ պիտի լինէր 10 աշխարհական պատգամաւոր։ Միւս կողմից 10 թեմերի համար են-թաղբելով 10 հոգեորական պատգամաւոր, չենք ասել, թէ այդ պատգամաւորն ովկ պիտի լինի, թեմական ա-ռաջնորդը, թէ թեմի հոգեորականների ընդհանուր ժո-

զովի ընտրածը: Սովորայթի իրաւունքով հայրապետական ընտրութիւններին մտանակցում են առաջնորդները: Բացի գրանից, մինչ ոռուսահայերը 40 ընտրական շրջանով ունին 52 ներկայիշ, Տաճկահայերը բաժանած լինելով 46 թեմի, ոսոյն ընտրութիւններին մտանակցում են 91 ներկայիշներով—46 հոգնորական և 45 աշխարհական: Ըստ այդմ Թուսահայ հոգնորականների ձայնը պիտի լինէր 42, որի մէջ մի ձայն էջմիածնի միաբանութեանը և մի ձայն հայրապետական տեղակալնուլ: Եթէ մնիք Թուսահայ հոգնոր ալտուգամաւորների թիւը պակաս ենք ենթագրել, դա մնիք հարկագրաբար արել ենք ներկայումս ընդունեած և գործադրուող անարդար հանգամանքի առաջն առնելու համար: Անյայտ չէ, որ Թուսահայերը հայրապետական ընտրութիւններին մասնակցում են 6 ձայնի իրաւունքով, մինչդեռ նոցա հոգեւորականները 21 ձայնի: Որպէսողի հոգեւորականների ձայնի գերակշռութիւնը թուլանայ, աշխարհականների ձայնների թիւը 6 ից բարձրացնել ենք 40-ի, որով ընդհանուր թիւը լինում է 89 աշխարհական և 62 հոգեւորական՝ ձայնի հաւասար իրաւունքով: Եթէ Թուսահայ հոգեւորականների թիւը բարձրացնենք 42-ի, կստանանք ընդհանուր առմտմբ 89 աշխարհական և 91 հոգեւորական: Արդ, այդ ձեւերից ո՞րն է աւելի ընակիր, դա կանոնագիր ժողովի գործն է, իսկ յատկապէս Տաճկահայերի ինդիքը մեր պետութեան օրէնսդիր ժողովի սահկցիային ենթակայ լինել չի կարող, հետեաբար և չի յիշուի ներկայ կանոնագրութեան մէջ, կամ աւելի ճիշտն ա-

սած, Տաճկահայ թեմերի համար նրանով նոր կարգեց
սահմանել չի կարող տեղի ունենալ:

Մեր եկեղեցու մէջ հիմնական սկզբունքը է և պիտի
մնայ ընտրական սկզբունքը ամենալայն հիմունքներով,
մի հանգամանք, որ մեր ներկայ նախագծի մէջ առան-
ձին կերպով շեշտած է: Այս դէպքում մեր արածը մի
արձագանք է ներկայ պահանջների:

Այն խնդիրները, որ ներքին կանոնադրութեան են
վերաբերում, ու շօշափում են մահրամասնութիւններ,
մենք թողել ենք, այն նկատումով, որ նորա աեղ շեն
կարսկ բոնել այս կանոնադրութեան մէջ: Սյապէս, խօ-
սելով ձեմարանի կամ թեմական միջնակարգ դարացնե-
ցի մասին, թողել եմ, որ նրանց ծրագրի և կանոնա-
դրութեան մանթամասնութիւնները առանձին կանոնա-
դրութեամբ որոշվին, որը հիմնական կանոնների մէջ
յատուկ ենթադրել ենք տւել:

Նաև թէ, եկեղեցու հին կարգը, որ իր գործա-
դրութիւնն է ունեցել յաճախ, թոյլ է տւել պատաս-
խանատուութեան կոչելու նոյն իսկ եկեղեցու գլխին—
պատրիարք կաթուղիկոսին: Ճշմարիտ է, եկեղեցին այդ
առթիւ կանոնական սահմանումներ չունի, բայց սովո-
րոյթի օրէնքն այդ դէպքում լրացնում է այն, ինչ որ
չէ արել կանոնադիր ժողովը նաև գատել է տւել հայ-
րապետին աղքի և եկեղեցու գերագոյն շահերի դէմ
ընթացք ունենալու համար: Եւ իրօք անկօնարօլ է մի-
այն միահեծանութիւնը, իսկ մի եկեղեցի, որ կառա-
գարւում է սահմանադրական հիմունքներով, չի կարող

համբերել այդ հակասութեանը։ Աւսահի և հիմք ունենալով եկեղեցու մէջ գոյսութիւն ունեցած այդ սովորութիւնը, ենթաղըել ենք տւել այդպիսի մի պատասխանաւութիւն, առանց մանրամասնութիւնների մէջ մըտնելու, որովհետեւ այդ մանրամասնութիւնները ներքին կետների, ներքին կանոնադրութեան խնդիրներ են։ Մենք հիմք ունինք ենթաղըելու, որ այդ առթիւ բաւական է ե այն, որ պիտական օրէնքները ճանաչեն այդ սկզբունքը, իսկ թէ հայ եկեղեցին Բնշ մանրամասնութիւններով կը զեկավարւի այդ խնդրում, զայ հայ եկեղեցու ներքին գործ է։

Խօսելով ամուսնական խնդիրների մասին, կազող ենք տաել որ մեր առաջ բերած կանոնները լիովին չեն արտայայտում մեր անձնական համոզումները։ Եյտպէս, մենք կազմեակից ենք քաղաքացիական ամուսնութեան, ու համոզւած, որ զա պոտի ամենալաւ ձեն է, բայց որովհեակ ներկայումս գրանք պայմանաւորում են եկեղեցու իրաւասութեան ենթակայ լինելու հանդամանքով, զբա համար էլ ընդարձակ տեղ ենք տւել այդ խնդրին

Հաս ու շհասի աստիճաններ որոշելիս զեկավարւել ենք արենակիցների նկատմամբ Պարտաւի ազգային ժողովի (768թ.)—կանոնավ, որով թոյլ է արւաւմ եղբօր որդուն, կին առնել միւս եղբօր թոռանը (Վ աստիճան)։ բացի դրանից ենթաղըել ենք, որ բայտակիկ զէալքերում թոյլարնի է ամուսնութիւն և երկու եղբօր կամ քրոջ որդոց մէջ (Վ աստիճան)։

Ենք եկեղեցին իր կանոնագիր ժողովներում ամե-

նեին ուշագրութեան չի առել ինսամիական շհառութիւնը: Մեզ թւուժ է թէ, եկեղեցին կարիք չի զգացել այդպիսի արգելքների: Խնամիական շհառութեան արգելքները մէր եկեղեցու մէջ առաջ հն եկել յետագայ դարերում իշխ հետեանք կուսակրօն հոգևորականութեան կերծ և անմիտ քարեպաշտական զգացմունքների: Այդ 'ի նկատ ունենալով, խնամիական շհառութիւնը իջեցրել ենք սինչի երկրորդ առաջինը, իսկ խորդութեան դէպքում թոյլ ենք տալիս տմուսնութիւն նոյն իսկ երկրորդ առաջինում, ինչպէս այդ բացատրել ենք իր տեղում:

Խմբագրութեան թերութեան հետ կարսղ են նկատիլ և լեզուի թերութիւններ, որի համար պարտաւոր ենք առել հետեհալը.

Նախագծիս վերջնական բնագիրը կազմելուց յետոյ, աշխատեցի թարգմանել ոռւսերէն, որը մի անհրաժեշտութիւն էր: Այդանու այնպիսի գժւարութիւնների հանդիպեցի, որ առաջ չէի երեակայում, ուստի և նախ կաղմեցի ոռւսերէն բնագիրը, և ապա հայերէնը, աշխատելով որքան կարելի է խուսափել բառացի թարգմանութիւնից, թէի տեղ տեղ այդ բանը իրեն զգալ է տալիս:

— Հարկ եմ համարում յիշել, որ նախագծիս քանի մի կանոնները ինչպէս և ամուսնութեան վերտքերեալ կանոնների մեծագոյն մասը վերցրել եմ պետական օքէնսպըքերից:

Զկամնալով աւելի մանրամասնութիւնների մէջ մանել, վերջացնում եմ խօսքս չնորհակալութիւն յայտնելով Գեր. Նահապետ եպիսկոպոսին, որ քանի մի խորհուրդներով նորաստեց ներկայ նախագիծո կազմելիս:

Արքեն վարդապետ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅՈՒԹԵԱՆԵՑՑՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՀՄԱՆԵՐՔՈՒԹԵՑՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

1. Հայաստանեայց եկեղեցին վայելում է կայսրութեան բոլոր քրիստոնեալ եկեղեցիների հետ գոյութեան հաւասար ազատութիւն:

2. Իր գաւանական, ծխական և հոգևոր-վարչական խնդիրներում կառավարում է հայ եկեղեցու կանոնների համաձայն:

3. Հայ հօտի հոգևոր պէտքերի կատարումը գլուխում է նրա նւիրապետութեան վրայ: Նւիրապետութեան մէջ իւրաքանչիւր անդամ ընդունում է ընտրական հիմոնքներով:

4. Նւիրապետութեան անդամների, կնշպէս և եկեղեցուն կից հիմնարկութիւնների պաշտօնեանների ընտրութիւնը կատարում է ընդհանուր ձայնատութեամբ. իւրաքանչիւր հայ, որ լրացրել է 24 տարին, ունի ձայնի իրաւունք:

5. Հայաստանեայց եկեղեցու իրաւունքի ազբիւրը,
նրա գաւանական, ծիսական և ներքին կեանքի խնդիր-
ների նկատմամբ Հայոց եկեղեցու ազգային ժողովն է:

6. Հայաստանեայց եկեղեցու ազգային ժողովը հը-
րաւիրում է Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցու և
ազգի ընտրւած ներկայիչներից:

7. Հայ հոգևորականները քաղաքական և քրէական
գործերի համար հնթակային մարմնաւոր իշխանութեան
դատին:

8. Վահճերը, եկեղեցիները և եկեղեցական ծխա-
կան հաստատութիւններն ունին սեփականութեան իրա-
ւունք պիտութեան մէջ ընդհանուր հիմունքներով:

9. Հայ եկեղեցու հոգևորականութիւնը, այն բոլորի
համար, որ վերաբերում է նրա զուտ հոգևոր պարտիք-
ներին, գտնուում է միայն իւր հոգևոր իշխանութեան
վարչութեան տակ և նրանից կախումն ունի:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

Ամենայն Հայոց Ծայր. Պատր. Կաթուղիկոսի մասին

10. Հայաստանեայց եկեղեցու գործերի ծայրակոյն
զեկութարն Ամենայն Հայոց ծայր. Պատրիարք Կաթու-
ղիկոսն է:

11. Հայոց եկեղեցու դարաւոր սովորութեան հա-

մաձայն, ծայրակային պատրիարք կաթուղիկոսն ընտառ-
ւում է աղքի և եկեղեցու ներկայիշների ընդհանուր
ժողովով:

12. Հայրապետի մահից անմիջապէս յիշով կաթու-
ղիկոսական տեղակալի նախագահութեամբ էջմիածնեան
Կենդրոնական Խորհուրդը կազմում է բոլոր հայկական
թեմերի ցուցակներն, ինչպէս Ռուսաստանում, Նոյնպէս
և նրա սահմաններից դուրս, և նշանակում ներկայիշ-
ների ընտրութիւնն, պատրիարք կաթուղիկոս ընտրելու
համար:

13. Հայրապետի ընարութեանը, որ տեղի է սննի-
նում վերջին կաթուղիկոսի մահից շորո ամիս յիշով,
մտահակցում են 1) Ռուսաստանի տասը թեմերը. 2)
Տաճկաստանի, Եղիպատոսի, Յուլգարիայի և Ռումինիայի
46 թեմերը. 3) Ասրապատականի, Պարսկա-Հնդկաստանի,
Եւրոպայի և Ամերիկայի 4 թեմերը. 4) Էջմիածնի միա-
քանութիւնը և 5) Հայրապետութեան տեղակալն ան-
ձամբ, ինչպէս ներկայիշների ժողովի նախագահ՝

14. Ռուսաստանի թեմերը բաժանուում են ընտրա-
կան շրջանների, իւրաքանչիւր շրջանը կաթուղիկոսա-
կան ընտրութեանը մտահակցում է մի աշխարհական
պատղամառով՝ մի ձայնի իրաւունքով: Բոտ այդմ ու-
նին 1) Երևանի թեմը 5 շրջան. 2) Թիֆլիսինը 7.
3) Ալեքսանդրապոլինը 5. 4) Ղարսինը 3. 5) Գան-
ձակինը 4. 6) Դարբարագինը 4. 7) Բագուինը 4. 8) Հիւ-
սիսային Կովկասինը 3. 9) Նոր-Նախչաւանինը 3. և

10) Հաշտարխանինը 2. բացի դրանից իւրաքանչիւր թեմ ունի մի հոգեսր ներկայիշ: Հայրապետ ընալողների ընդհանուր թիւր 151 է. դրանցից 1) 10 հոգեսրական և 40 աշխարհական Ռուսահայերից. նոյն թիւր մէջ Թիֆլիս քաղաքը 2 ընտրող, Ալեքսանդրապոլը, Բագրեն և Երևանը մի ընտրող. 2) 46 հոգեսրական և 45 աշխարհական Տաճկահայերից. 3) Հոգեսրական և աշխարհական մնացած շորս թեմերից. 4) մի պատգամաւոր էջմիածնից և 5) Հայրապետական տեղակալը:

15. Եթէ որևէ պատգամաւոր ահճամբ հնարաւորութիւն չունի ներկայ լինել հայրապետական ընտրութիւններին, նա իր ձայնը կարող է տալ մի այլ պատգամաւորի առանձին հաւատարմագրով, այն գէպօւմ, եթէ ընարող չըջանը հնարաւորութիւն չունի նոր ընտրութիւն կատարելու: Մի պատգամաւոր միաժամանակ երկու ձայնից աւելի չի կարող ունենալ:

16. Հայրապետի ընտրութիւնը կատարւում է ս. էջմիածնի միաժամբ Սայր Տաճարում նախազահութեամբ հայրապետական տեղակալի: Ընտրութեան կարգը որոշում է ժողովը:

17. Պատգամաւորների ժողովը. ըստ դարաւոր սովորութեան հայ եկեղեցու, ընտրում է միայն մի կաթուղիկոս:

18. Նոր ծայրագոյն պատրիարք, կաթուղիկոսի ընտրութեան մասին հայրապետական տեղակալը պաշտօ-

նապէս հաղորդում է այն պիտութիւններին, ուր հայ թեմեր կօն:

19. Ընտրւած պատր. կաթուղիկոսն օծումն ընդունելոց առաջ, երգում է հաւատարիմ մնալ հայատանեայց եկեղեցու զաւանութեանը, աւանդութիւններին և ժողովներով սահմանւած կանոններին:

20. Ամենալին Հայոց ծայր. պատր. կաթուղիկոսն եթէ որիէ կերպ զրժի իր երդմանը—լինել հաւատարիմ հայ եկեղեցուն, նա պատասխանաւու է ընտրող ազգի առաջ:

21. Հայրապետին դատի ենթարկելու համար գումարում է հայ ազգի և եկեղեցու ներկայիշների արտակարգ ընդհանուր ժողով:

Սրտակարգ ժողով հրատիրելու որոշումը կայացնում է տեղակալի նախադահութեամբ՝ էջմիածնի կենդրոնական խորհուրդի և թեմական խորհուրդների մի աշխարհական և մի հոգեորական ներկայիշների ընդհանուր ժողովը:

22. Հայութեատի իբաւասութեան ենթակայ են. 1. միւսոն օրնել ամբողջ հայ ազգի համար. 2- եպիսկոպոսներ ձեռնադրել թեմերի ներկայիշների նախընթաց ընտրութիւնից յետոյ. 3. հաստատել կենդրոնական խորհրդի անդամներին և առաջնորդներին. 4. աքակուրտ տալ կենդր. խորհրդի անդամներին և առաջնորդներին. 5. դատի ենթարկել առաջնորդներին և առ հասարակ եպիսկոպոսներին. 6. կենդրոնական խոր-

հըդի նախընթաց որոշումից յետով լուծել հոգեսրական-ներին կոչումից:

23. Հայրապետը թեմական առաջնորդներին և եպիսկոպոսներին, նրանց զօրծած յօնցանքների համաձայն, ենթարկում է իր նախագահութեամբ՝ հայ նկեղցու աւագագոյն 12 եպիսկոպոսների և առար թեմից ընտրած տասը աշխարհական ներկայիշների դատին:

24. Այն գէպիքում, եթէ որեէ պատճառով սլատրիպրգ կաթուղիկոսը չի ցանկանայ ներկայ լինել եպիսկոպոսների դատին, իր փոխարքն նշանակում է նախագահ հայրապետական տեղակալին: Այս գէպիքում, դատարանի վճիռը ներկայացնում են պատր կաթուղիկոսի հաստատութեանը:

25. Ծայրագոյն պատրիարք կաթուղիկոսը հայ եկեղեցու աւանդութիւնների, դաւանութեան և կանոնների վերաբերմամբ բարձրագոյն հակողն ու պահանջն է:

26. Հայաստանեաց եկեղեցու կանոնագիր ժողովի նախագահը կաթուղիկոսն է: իսկ նրա բացակայութեան դէպիքում հայրապետական տեղակալը:

27. Հայոց ազգային ժողովի այն որոշումները, որոնք պետական օքնութիր իշխանութեան հաստատութեանը պիտի ենթարկվին, պատրիարք կաթուղիկոսը ներկայացնում է նրա հաստատութեանը:

28. Ա. Էջմիածնի վանքն իրը աթոռանիստ հայրա-

պետական գահի, գտնւում է ծայր. պատր. կաթուղի-
կոսի բարձր հսկողութեան ներքոյ:

29. Ամենայն հայոց հայրապետը կայսրութեան
մէջ գտնւած իւր հօտի հոգեոր գործերը կառավարում
է էջմիածնեան կենդրոնական խորհրդի միջոցով:

30. Հայրապետական տեղակալին ընտրում է կեն-
դրոնական խորհրդագր ամենայն հայոց հայրապետի նա-
խագահութեամբ:

31. Հայրապետի մահից յետոյ կենդրոնական խոր-
հրդագր ցուցագրում է կաթուղիկոսի անձնական գոյքը,
որ անցնում է էջմիածնի վանքին՝ ի սեփականութիւն:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Էջմիածնի կենդրոնական խորհրդի մասին

32. Ռուսաց կայսրութեան սահմաններում գտնւած
հայ հօտի հոգեոր-վարչական գործերի ընդհանուր կա-
ռավարութիւնը գտնւում է էջմիածնի կենդրոնական
խորհրդի իրաւասութեան տակ:

33. Կենդրոնական խորհրդի անդամները, թուղ
թե ընտրում են ռուսաստանի տասը հայկական թե-
մերի կողմերից հինգ տարի ժամանակով: Այդ թւի մէջ
մի մի աշխարհական անդամ ընտրում են Թիֆլիս, Բա-
գու և Ալեքսանդրապոլ քաղաքները:

34. Խւրաքանչիւր մեռած կամ հրաժարւած անդամի տեղ ընտրում է, նախ քան ամբողջ խորհրդի կազմի լիազօրութեան ժամանեակի լրանալը, նոր անդամ: Ընտրում է այն թեմը, որի ներկայիշը որ է հեռացած անդամը:

35. Հայրապետական գահի թափուր ժամանակ կենդրոնական խորհրդի և կաթուղիկոսական տեղակալի իրաւասութեան ենթարկում են ցընտրութիւն նոր կաթողիկոսի, բոլոր այն գործերը, որ 21 յօդ. 3. 4. և 6 կէտերում են թւած:

36. Կենդրոնական Խորհրդին ենթարկում են 1. եկեղեցու և հոգեուրականութեան բարեկարգութեան ընդհանուր խնդիրները. 2. եկեղեցական—ծիական բարեգործական հիմնարկութիւնների կանոնադրութիւնների և թեմական միջնակարգ գպլոցների հոգաբարձական խորհրդի հաստատութիւնը. 3. Ստորագիր վարչութիւնների համար հրահանգներութիւններ հրատարակելը. 4. եկեղեցիների յատակագծերի հաստատութիւնը և թոյլտութիւն շինութեան:

37. Էջմիածնի կենդրոնական խորհրդուր հայ եկեղեցու գործերի բարուք կառավարութեան համար բաժանւում է իրարից անկախ եքեք կոլեգիալ խորհրդների—Ռւսումնարանական Դատաստանական և Տնտեսական:

38. Էջմիածնի կենդրոնական խորհրդի նախագահը հայրապետական տեղակալն է:

39. Դպրոցական խորհուրդը բաղկացած է 7
անդամից, 2 հոգեորական, 5 աշխարհական։ Դատաս-
տանական խորհուրդը 7 անդամից 5 հոգեոր, 2 աշխարհ.
և Ցնտեսական խորհուրդը 9 անդամից—3 հոգեորական
և 6 աշխարհական հաւասար իրաւունքներով։

40. Էջմ. Կենդրոնական թեմական և չըջանային
ուսումնարանական խորհուրդների փոխադարձ յարաբե-
րութիւնները որոշում են կաթուղիկոսից հաստատւած
առանձին կանոնադրութեամբ։

41. Կենդրոնանան ուսումնարանական խորհուրդն է
հրաւիրում 1 ուսուցչական, 2 ուսուցչական և հոգա-
բարձական և 3 հոգաբարձական լնդհանուր համաժո-
ղովներ ծխական դպրոցների և նրանց յարակից այլ
ընդհանուր խնդիրների քննութեան համար։

42. Առանձին ատեաններն ընտրում են իրենց նա-
խագահներին։

43. Առանձին խորհուրդների որոշումների և նրանց
անդամների գործողութիւնների դէմ բողոքները տրում
են կենդրոնական խորհուրդին։

44. Կենդրոնական խորհրդի բոլոր վճիռները ներ-
կայացնում են Ամենայն Հայոց Հայրապետի հաստատու-
թեանը։

45. Կենդրոնական և թեմական խորհուրդների ան-
դամները իրենց պաշտօնի նկատմամբ գործած յան-

ցանքների համար, որ նախատեւած էն պետական օ-
րէնքներով, ենթարկում են քաղաքական իշխանութեան
դատին:

46. Էջմիածնի կենգրոնական խորհուրդն ունի իր
զբամարկղը, ուր գանձում են 1 խորհրդին պատկանած
զբամները. 2 վանական կալւածների բոլոր եկամտանե-
րը. 3 թեմական խորհուրդների և վանքերի խնայողու-
թիւնները:

47. Եւրաքանչիւր ամիս կատարում է խորհրդի առ-
նւազն հօթն անդամի ներկայութեամբ գանձարկղի
սառուղութիւն: Կենգրոնական խորհուրդն է ընտրում իր
գանձապահին:

48. Ընթացիկ ծախուց դրամները գանձարկղից
գուրս են-աբւում կենգրանական խորհրդի կամ նրա ա-
ռանձին մասերի որոշման համաձայն:

49. Կենգրոնական խորհուրդի հնքա առանձին մա-
սերի գիւանը գտնուում է խորհրդի իրաւասութեան
տակ:

50. Կենգրանական խորհուրդը գումարում է շա-
րաժը մի անդամ, նրա առանձին մասերը երեքական
անդամ, և ուսումնաբանական խորհուրդը մի անդամ:

Գ Լ Ո Խ Գ.

I Թեմական առաջնորդների եւ խորհուրդների մասին:

51. Կայսրութեան մէջ հայ հօտի հոգեսր զործերի կառավարութեան համար եկիղեցիները բաժանում են տար թեմի.—Երեանի, Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Քաղուի, Գանձակի, Ղարսի, Ղարաբաղի, Հիւսիսային՝ Կովկասի Հաշտարխանի և Նոր-Նախճաւանի:

52. Երեանի թեմին պատկանում են, Երեանի, Նոր-Բայազիլիսի, Հին-Նախճաւանի Վազարչապատի, Սուրմալուի և Ջարուր-Դարալազեազի գաւառները. Թիֆլիսին՝ Թիֆլիսի, Լոռիի, Գորիի, Սուրամի, Ախալցիայի, Ախալքալակի և Թելաւի գաւառները, Քութայիսի նահանգը և Բաթում ու Փօթի քաղաքները. Ալեքսանդրապոլին՝ Ալեքսանդրապոլի գաւառը Արտանը. Ղարսինը՝ Ղարսի նահանգը. Բագուին՝ Բագուի նահանգը ու Լէնքօրանի գաւառը. Գանձակին՝ Գանձակի, Ղաղախի, Սղնախի, Նուխու գաւառները և Զաքաթալայի շրջանը. Ղարաբաղին՝ Ջիւնչիրի, Ջիբրայելի Զանգեղուրի գաւառները. Հիւսիսային՝ Կովկասին՝ Հիւսիսային՝ Հիւսիսային՝ Կովկասի և Սուխումի շրջանը. Նոր-Նախճաւանին՝ Բելսարաբիայի նախկին թեմը և Հաշտարխանի՝ Ռուսաստանի արեելեան նահանգները. Սիբիրը և Մեղրկաս-պետն երկիրը:

Ծանօթութիւն:
Փոխանորդութիւններ ենթադրում են 1) Երեան թեմում 2-Հին-Նախճաւանում և Նոր-Բայազէտում, 2) Թիֆլիսի թեմում 2. Ա.

իսկաքաղաքում, Գորիսում. 3) Ալեքսանդրապոլի թեմում 1. Հառիճում
4) Գանձակի թեմում 1. Նովիտում. 5) Ղարաբաղի թեմում 1. Տա-
թևում. 6) Բագուհի թեմում 1. Ջամախում. 7) Գարսի թեմում. Ջիբա-
կում, 8) Նոր-Նախաջաւանի թեմում 3. Մայրաքաղաքներում և
Քիչներում. 9) Հիւսիսային Կովկասի թեմում 1. Աղարում. 10) Հաշ-
տարիսանի թեմում 1. Անդրկասպեան երկուում.

53. Հայաստանի հայց եկեղեցու հնաւանդ սովորու-
թեան համաձայն, առաջնորդներին ընտրում են ժողո-
վորի և հոգեորականութեան ներկայացուցիչները:

54. Թեմական առաջնորդներն ընտրում են հինգ
տարի ժամանակով, սակայն պաշտօնավարութիւնը լր-
քանալուց յետոյ կարսղ են վերընտրւել:

55. Եւրաքանչիւր թեմ բաժանւում է ընտրական
16—30 մանր շրջանների՝ համաձայն թեմի ժողովութիւնը
թւի: Եւրաքանչիւր շրջան ընտրում է երկու՝ մի հոգե-
որական և մի աշխարհական պատզամաւոր, որոնք թե-
մի կենդրում ընտրում են թեմական առաջնորդ:

56. Ամենայն Հայոց Հայրապետը ընտրւած առաջ-
նորդին հաստատելուց առաջ Կովկասեան բարձր իշխա-
նութեան հաւանութեան է գիմում, իսկ Կովկասի սահ-
մաններից գուրս գտնւած թեմերի համար նելքին գոր-
ծոց նախարարի:

57. Թեմական առաջնորդը 1 նախագահում է թե-
մական խորհրդին. 2. հսկում է իր թեմի շրջանում հայ
եկեղեցու կանոնների և դաւանութեան պահպանու-
թեան վրա. 3. ձեռնադրում է քահանաներ, համաձայն
ժողովրդի ընտրութեան և թեմական խորհրդի որոշման

4. ատրին մի անգամ շրջում է թեմը և անձամբ գննութեան առնում տեղական վարչական մարմինների գործունէութիւնը, 5. ներկայացնում է տարեկան տեղեկադիր բոլոր հաստատութիւնների մասին կենդրունական խորհրդին; 6. Գումարում է թեմի տեղական կարգներին բաւարարելու համար թեմական ժողովներ.

7. թեմական խորհրդի նախընթաց քննութիւնից և հաւանութիւնից յետոյ հրատարակում է թեմի ստորագիր վարչութիւնների համար ժամանակաւոր հրահանգութիւններ.

58. Իւլաքանչիւր թեմ ունի իր թեմական խորհրդ 2 հոգեորական և 3 աշխարհական անդամներով թեմական առաջնորդի նախագահութեամբ որ ընտըրւում են նոյն ձեռվ և նոյնքան ժամանակով ինչպէս և թեմական առաջնորդը:

59. Առաջնորդական աթօռի թափուր ժամանակ թեմի խորհրդի ժամանակաւոր նախագահ նշանակում է առաջնորդական փոխանորդներից մէկը:

60. Թեմական խորհրդի իրաւասութեանը ենթարկւում են 1. ամսուսնական և ամուսնալուծական խնդիրների վերջնական լուծումը. 2. եկեղեցիների բարեկարգութիւնը, 3. հաստատութիւն՝ լրջանային հոգեու կառավարութիւնների, ծխական հոգաբարձութիւնների, ստորագիր հիմնարկութեանց տարեկան հաշիւնների և նախաշիւնների, 4. ստորագիր հաստատութիւնների գործունէութեան վերահստութիւն, 5. քննութիւն հոգեսր

անձանց զործողութիւնների դէմ բողոքների, 6. պատասխանատւութիւն հոգեորականների:

61. Թեմական խորհուրդները հաշւետու են էջմ. կենդրանական խորհրդին և նրա առանձին առեմնանեներին:

62. Թեմական խորհուրդը ամեն ամիս կատարում է ստուգութիւն իր գանձարկութիւն քանձապահին ընտրում է խորհուրդը:

63. Թեմական խորհուրդի որևէ է անդամնի հեռանալու կամ մահան դէպքում կատարում է մտսնակի ընտրութիւն:

64. Խորհրդի զիւտնը գտնուում է խորհրդի իրաւասութեան առականական առաջնորդ:

65. Իւրաքանչիւր թեմում թեմական առաջնորդի նախագահութեամբ թեմական խորհրդի Յաշիարհական անդամի, թեմական միջնակարգ դպրոցի մանկավարժական ժաղավայրից ընտրւած մի և թեմական քաղաքի ծխական գպրոցներից ընտրւած մի ներկայիշի՝ կազմում է թեմական ուսումնարանական խորհուրդ:

66. Ուսումն. խորհրդի իրաւասութեան ենթարկեամբ են թեմական հոգեօր կրթական հիմնարկութիւնների ընդհանուր գործերը:

67. Թեմական ուսումն. խորհուրդը ներկայացնում

է էջմիածնի կենդրոնական ռւսումնաբանական խորհըրդին տարեկան նախահաշիւ հոգեոր—կրթական հիմնարկութիւնների:

II Նրանային հոգեւոր կառավարութիւնների եւ ուսումնարանական խորհուրդների մասին

68. Խրաբանչիւր թեմ բաժանում է 1—3 շրջանային հոգեոր կառավարութիւնների նախագահութեամբ առաջնորդութիւն տական փոխանորդի:

69. Կառավարութեան անդամները թւով երկու՝ հոգեորական և աշխարհական և փոխանորդն ընտրում են շրջանից հինգ հինգ տարի ժամանակով:

70. Փոխանորդի և կառավարութեան անդամների ընտրութեան համար խրաբանչիւր եկեղեցի ընտրում է մի հոգեորական և մի աշխարհական պատգամաւորներ:

71. Հոգեոր կառավարութիւններին ենթակայ են 1. նախական հայեցողութիւն հոգեոր պաշտօնաների դէմ բողոքների, 2. ամուսնական հասուչհասի խնդիրների լուծումը, համաձայն գոյութիւն ունեցած կանոնների, և ամուսնալուծական խնդիրների նախական քննութիւնը, 3. գործակալների հաստատութիւնը, գործակալութեան խրաբանչիւր եկեղեցու մի հոգեոր և մի աշխարհական ներկայացուցիչների ընտրութիւնից յիշոյ:

72. Հոգեոր կառավարութիւններն ու փոխանորդները գտնեւում են թեմական խորհրդի անմիջական իշ-

խանութեան տակ, ներկայացնում են առքեց տարի եղեղեցիների, եկեղեցական գոլքի, հոգեորակաների և հիմնարկութիւնների մասին տեղեկագիր:

73. Եւրաքանչիւր փոխանորդութեան մէջ գործում է շրջանային ուսումնաբանական ինքնավար խորհուրդ փոխանորդի նախագահութեամբ:

74. Ջրջանային խորհուրդը թւով 4 աշխարհական ընտրում է շրջանի գլուխոցների մանկավարժական ժողովի և ծխական հոգաբարձութեան ներկայիշների ժողովով՝ ձայնի հաւասար իրաւունքով:

75. Ջրջանային խորհուրդը վարում է շրջանի զբարոցների բալոր գործերը, որ ենթակայ են նրա խորհրդածութեանը: Ջրջանային խորհուրդը տեղական կարիքներին բաւարարելու համար գումարում է ընդհանուր ժողով, 1 ուսուցչական, 2 հոգաբարձական և 3 խոռն ուսուցչական և հոգաբարձական:

76. Ջրջանային ընդհանուր ժողովներում յարուցւած ընդհանուր բնոյթ ունեցող խնդիրները, որ ենթակայ են թեմական դպրոցական ժողովի վճռահատութեան և կամ ընդհանուր կայորութեան մէջ գանւած հայ գլուխոցների և հոգաբարձութեան համագումարի, շրջանային ժողովի նախագահի միջոցով ժողովի եղբակացութիւնների հետ ներկայացւում են եջմիածնի ուսումնաբանական խորհրդին: Ջրջանային ժողովների տեղական բընոյթ ունեցող խնդիրները գործադրում են շրջանային խորհրդի միջոցով, առանց սպասելու այդ մասին թեմական ուսումնաբանական խորհրդի վճռին:

Գ Լ Ո Ւ Խ.

Վանքերի, վաճականների եւ ամուսնաւոր հոգեւո-
րականների մասին:

77. Վանքերը հիմնուում են հայ եկեղեցու աւան-
դակտն կարգերի և կանոնների համաձայն և կառավար-
ում են ընտրական հիմունքներով:

78. Վանքի միաբան ընդունում են միաբանութեան
ընդհանուր ժողովի նախրնթաց համաձայնութեամբ:

79. Միաբան ընդունելու համար տղամարդկանցից
պահանջում է 22 տարի և օրիորդներից 18 տարի,
իսկ կրթական նւազագոյն ցեղազը միջնակարգն է:

80. Վանահօր ընաբութիւնը կատարում է միաբա-
նութիւնը, իսկ այն վանքերում ուր միաբանութիւն չը-
կայ, վանահայրերին ընաբում է ո. էջսիածնի միաբա-
նութեան ընդհանուր ժողովը:

81. Վանահայրերին հաստատում է պատրիարք կա-
թողիկոսը:

82. Վանականը գրկուում է անշարժ կայք ունենալու
իրաւունքից, իսկ իր արդար վաստակով ձեռք բերած
շարժական ստացւածքը կարող է կտակով իր օրինա-
կան ժառանգներին կամ բարեգործական հիմնարկու-
կութիւնների թողնել: Այն գէտքում եթէ կտակ չէ
թողնւած, մեռածի բոլոր կարողութիւնը հաշւում է
ոեփականութիւն այն վանքի, որի միաբան օր գրւած է:

83. Վանքերին կից թոյլ է տրւում բանալ կրթական և այլ բարեգործական հաստատութիւններ:

84. Վանքերը հաշւետու են թեմական խորհուրդին իսկ նախահաշիւնները հաստատում է Էջմիածնի տնտեսական խորհուրդը:

85. Խւրաքանչիւրը, որ կամովի թռղնում է խւր հոգեսր կոչումը, վերագտառնում է այն գասակարգին որին պատկանում էր նախքան վանք մտնելը:

86. Էջմիածնի գերագան վանքը կառավարում է վանական առանձին կանոնադրութեամբ, հաստատւած ծայրագոյն պատրիարք կաթողիկոսից:

87. Վանքի գործերի կառավարութեան համար միաբանութեան ընդհանուր ժողովը ընտրում է վանական խորհուրդ, բաղկացած եօթն անդամից Յ տարով և հաւասար իրաւունքով:

88. Վանական խորհրդի իրաւասութեան ենթարկում են: 1 Վանքի ներքին տնտեսութիւնը, 2 հրատարակութիւն պաշտօնական Արարատ ամսագրի և եկեղեցական գրքերի՝ ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի թույլտութեամբ, 3 Ցպարանն ու նըա շահագործութիւնը, 4 կառավարութիւնն մաներ կալւածների, ինչպէս են խանութներ, ջրաղացներ, այգիներ և աներ, որ գտնըւում են կայսրութեան սահմաններում:

89. Էջմիածնի վանքը հաշւետու է Էջմիածնական կննդրոնական խորհրդին, որին և ներկայացնում է իր նախահաշիւրը:

90. Էջմիածնի վանքը մասնակցում է հայրապետի
ընտրութեանը իր ընտրած պատգամաւորով:

91. Էջմիածնի վանքի համար կաթուղիկոսը հպիս-
կոպոսներ է ձեռնազբում միաբանութեան ընդհանուր
ժողովի նախընթաց ընտրութեամբ,

92. Միաբանութեան ընդհանուր ժողովի իրաւուն-
քըն է ընտրել վանահայրեր, Հոփիփսիմեի, Գայանէի, Ջո-
զակաթի վանքերի և Զուարթնոց եկեղեցու և աւագ լու-
սաբար Մայր Տաճարի:

93. Հայաստանիայց եկեղեցու սովորութեան համա-
ձայն ամուսնաւոր սրբազնագործ հոգեորակոններին
ընտրում է ծխականների ընդհանուր ժողովը:

94. Սրբազնագործ պաշտօնեանները տպրում են այն
եկամուտներով, որ նշանակում է նոցա ծխականների
ընդհանուր ժողովը:

95. Ամսւանաւոք հոգեորականների կարիքների
համար թոյլէտրում իւրաքանչիւր թեմում հիմնել
, հոգեորականների որբոց և այբեաց հոգաբարձու-
թիւն, փոխատու խնայողական զրամարկոներ և այլի
սրոնց կանոնավորութիւնը հաստատում է ամենան հայոց
Հայքագետեար:

96. Այդ հիմնարկութեանց դէմ բողոքները արւում
են թեմական խորհուրդներին:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Կրթական հաստատութիւնների մասին.

97. Հայադաւան մանկանց հոգեոր—բարոյական կը ը-
թութեան համար բացւում են ու էջմիածնում Հոգեոր
ձեմարան, իւրաքանչիւր թեմում միջնախրդ դպրանոց-
ներ և իւրաքանչիւր եկեղեցուն կից ծխական դրա-
լսցներ:

98. Էջմիածնի ձեմարանը և դպրանոցները կառա-
վարում են կառավարութիւնից հաստատած կանոնա-
դրութեամբ և ծրագրով:

99. Ա. Էջմիածնի ձեմարանը օգտառումէ կայսրու-
թեան բարձրագոյն դպրոցների իրաւունքներով և ար-
տօնութիւններով:

100. Հոգեոր ձեմարանը գտնուում է Ամենայն Հայ-
ոց Հայրապետարանի անմիջական հսկողութեան տակ, իսկ
իր ներքին կեանքի լինդիրներում նա կատարեալ ինք-
նավար հիմնարկութիւն է:

101. Ընտրութիւնը վերատեսչի և տեսչի երեք
տարով և ուսուցապետների՝ կախւած է ձեմարանի
կոլեգիայից և ներկայացւում ծայրագոյն Պատրի-
արք Կաթուղիկոսի հաստատութեանը:

102. Ձեմարանի վարչութիւնը ամենայն տարի ներ-
կայացնում է իր հաշիւն ու նախահաշիւը Տնտեսական
խորհրդի հաստատութեանը:

103. Կայսրութիւնն տառը հայկական թեմերում
հիմնում են տառը միջնակարգ դպրոցներ, կայսրու-
թիւնն նախարարի դպրոցների իրաւունքներով և արտօ-
նութիւններով:

104. Գոլրանոցի վարչութիւնը բաղկացած է հո-
գաբարձական խորհրդից, վերատեսչից և մանկավարժա-
կան խորհրդից:

105. Հոգաբարձական խորհուրդը նախագահու-
թեմամբ թեմական առաջնորդի, բաղկացած 12 անդա-
մից, կառավարում է դպրանոցի գոյՔը:

106. Հոգաբարձական խորհուրդն ընտրում է թե-
մի եկեղեցիների պատգամաւորների ընդհանուր ժողո-
վով թեմական առաջնորդի նախագահութեամբ չորս
տարի՝ ժամանակով:

107. Գոլրանոցների վարչութիւնները ամենայն տա-
րի ներկայացնում են հաշիւ Եջմիածնի կենզրոնական
դպրոցական խորհրդին:

108. Ծխական դպրոցները կառավարում են ծխի
ընտակած հոգաբարձութիւններով:

109. Ծխական դպրոցները լինում են զանազան
տիպի և ծրագրի:

110. Ծխական այն դպրոցներում, ուր աւանդում
են հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդ-
ում են և Ռուսաց պատմութիւն ու աշխարհագրութիւն
ուսուց լեզով:



Գ Լ Ո Ւ Խ Ե.

Վանական եւ եկեղեցական գոյքի կառավարութեան
մասին.

111. Վանական կալւածների ընդհանուր կառա-
վարութիւնը գտնուամ է Էջմիածնի Տնտեսական խոր-
հրդի ձեռքում:

112. Տնտեսական խորհուրդը վանական կալւած-
ները կառավարում է մասնագետներով. որ գործում են
կալւածնիրի շահագործութիւն: Համար կազմւած ծրա-
պի համաձայն:

113. Վանական կալւածների բոլոր եկամուտները
գտնածում են կենդրանական խորհրդի ընդհանուր գան-
ձարկում:

114. Տնտեսական խորհուրդը ստորագիր հիմնար-
կութիւնների նախահաշիւն ստանալուց յետոյ կազմում
է ընդհանուր ելիմացոյց բոլոր հիմնարկութիւնների:

115. Վանքերի և նբանց կից հիմնարկութիւնների
և ո. Էջմիածնի ճեմաբանի նախահաշւով որոշւած ծախ-
քերը լրացնելուց յետոյ, վանական կալւածների եկամու-
տի մնացորդը գնում է դպրոցական այլ հաստատութիւն-
ների ծախքերը ծածկելու համար:

117. Հայոց եկեղեցիների կալքերի կառավարու-
թիւնը յանձնում է երեցփախանից և 2—4 հաւասար

իրաւունքնելով անդամներից բաղկացած՝ երեք տարով
ծխականներից ընտրւած ծխական հոգաբարձութեանը:

118. Ծխական հոգաբարձութեան անդամների ընտրութիւնը լինում է ծխականների ընդհանուր ժողովներից ներկայ եղողների ձայնից բազմութեամբ:

119. Ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է հոգ տանել պատշաճաւոր թոյլտութիւնից յետոյ բաց անելու ծխի մէջ զպրօցներ, հիւանդանոցներ, անկերանոցներ, ապաստարաններ և այլ բարեկործական հիմնարկութիւններ, մոմի գործարան:

120. Հոգաբարձութեան կազմած տարեկան նախահաշիւլ ծխականների ընդհանուր ժողովի հուանութիւնից յետոյ ներկայացնում է թեմական խորհրդին:

121. Ծխական հոգաբարձութիւնները հաշւեառ են ինչպէս թեմական խորհուրդների, այնպէս և ծխականների ընդհանուր ժողովի առաջ, որ ծխական հոգաբարձութեան լիազօրութեան ժամանակամիջոցի համար ընտրում է ստուգող մասնաժողով երեք անձից բազկացած, որի եղբակացութիւնները ներկայացաւում են ծխականների ընդհանուր ժողովին:

122. Երեսփոխանին ընտրում է ծխականների ընդհանուր ժողովը երեք տարով:

123. Իւրաքանչիւր եկեղեցի պիտի ունենայ սաոյգ մանրամասն ցուցակ եկեղեցու ամբողջ անշարժ կայքի, եկեղեցական իրեղէնների և փողերի:

124. Նոր երեսփախանը, պաշտօնի մտած ժամանակ, պարագաւոր է, հաւատավիանալավ, եկեղեցու գոյքի ամբողջութեանը, նոյնն ընդունել իր նախորդից 123-րդ յօդւածի համաձայի կազմւած ցուցակով:

Գ Լ Ո Ւ Ղ *

I. Պատկի համար անհրաժեշտ պայմանների եւ արգելվելու մասին:

125. Թոյլ է արւում ուժուանանալ հարսնացուին 15 տարեկան և փեսացուին 18 տարեկան, բացառիկ դէպքերում թոյլ է արւում մի տարիով պակաս:

126. Պատկի համար պահանջւում է փեսացուի հաթօնացուի իրավէու և պարզ այդ մասին արտայայտած համաձայնութիւնը:

127. Ամուսնական կապի համար դրւած տարիքին չհասածները ամուսնաւում են ծնողների կամ խնամականեցի համաձայնութեամբ:

128. Ամուսնանալու իրաւունքից զրկւած են խելազարները և հոգեկան հիւանդները:

129. Պատկի ժամանակ պահանջւում է երկու վկայի ներկայութիւն:

130. Թոյլ է արւում ամուսնիթիւն՝ կողմնազիծ

արևնակիցների մէջ հինգերորդ տստիճանում. բացառիկ հանգամանքննըում չորրորդ տստիճանում և խորդութեամբ հանգերձ չորրորդ տստիճանում. 2, խնամիութեան երրորդ տստիճանում և խորդութեամբ երկրորդ տստիճանում. 3, հոգեոր արենակցութեան երկրորդ տստիճանում: Բայ այսմ թոյլ է տրւում առնել հօրեղքօր թուանը, ինչպէս և բացառիկ դէպքում հօրաքրոջ, քեռու և մօրքքոջ աղջկան. հօրից կամ մօրից խորդ հօրեղմօր, հօրաքրոջ աղջկան, և այլն ²⁾, երկու եղբայր երկու քրոջ կամ քոյր ու եղբայր՝ քոյր ու եղբօր. խորդ քենուն, աներորդու կնոջը հօրից և մօրից խորդ քրոջը և այլն. 3) եղբօր սանիկին, հօր սանիկին, սանամօրը:

II Ծանուցման մասին:

131. Եւրաքանչիւր պսակից առաջ լինում է ծանուցումն: Դա լինում է նրանում, որ փեսացուի և հարսնացուի քահանաները իրար ետեից երկու կիւրակէ եկեղեցու մէջ յայտարարում են հարսնացուի և փեսացուի իրար հետ ամուսնանալու մտադրութեան, ճիշտ կերպով նոցա անունների, հայրանունների, ազգանունների, կոչման, պաշտօնի կամ արհեստի և նոցա ծնողների բնակութեան տեղի մասին: Արտակարդ դէպքերում ծանուցումը լինում է միայն մի անկամ:

132. Ծանուցումից յետոյ, եթէ բոլոքներ չեն յայտ-

նի հնթագրելի պոակի մասին, քահանան պսակում է:

133. Եթէ ծանուցումից յետոյ պսակն ուշացել է աւելի քան երեք ամիս, նա կորցնում է իր ոյժը, պսակելու համար նոր ծանուցումնեն անելու երկու անգամ:

134. Ենթագրելի պսակի մասին արգելքներ կարող են յայտնել 1, այն մարդիկ, որոնց համաձայնութիւնը պսակուելու համար պէտք է լինի. 2, այն մարդիկ, որոնք ծանուցման մէջ յիշւածներից մէկի կամ միւսի հետ կապւած են նախկին օրէնքով չլուծւած պսակով: Կարող են արգելքներ յայտնել նաև կողմնակի մարդիկ:

135. Այդ տեսակ իւրաքանչիւր յայտաբարութիւն կանգ է առնել տալիս ծանուցումին և պսակի ծէսը կատարելուն, մինչեւ որ նա չի ճանաչւի անհիմն:

136. Ծանուցումն զագարեցնողնը եթէ մի շաբաթւայ ընթացքում չի ներկայացնի պարզ ապացոյցներ, որ ինքը բողոքն արգէն ներկայացրել է շրջանային կամ թեմական խորհուրդներին, քահանան շարունակում է ծանուցումը և կատարում պսակը, եթէ այլ արգելքներ չեն յայտնի:

137. Եթէ պսակին հակառակողների յայտաբարութիւնները անհիմն գույս կուգան, բողոքը մնում է անհետանք, և խնդրատուն (բացառութեամբ ծնողների և որդեգրողների) նայած պսակին հակառակւելուն հետեւ հանգամանքներին, կարող է զրա համար պատժել և պսակւողների դրանից առաջացած վնասների հատուցմանը դատապարտել:

138. Եթէ պսակւել ցանկացողներից մէկն ու մէկը անյայտ են ծխական քահանային, նա պահանջում է պսակւողից բաւարար ապացոյցներ կամ առնւազն երկու արժանահաւատ պատասխանաւութիւնն իրենց վրա առնող վկաների վկայութիւն պսակւողի ծագման մասին, կամ այն մասին թէ նա իրաւունք ունի պսակւելու թէ ոչ: Եթէ նոքա շեն կարող ներկայացնել այդ տեսակ ապացոյցներ և վկայականներ, նոցա պսակւելու մտագրութեան մասին պէտք է երեք անգամ յայտարարւի թեմական համբաւարերերի մէջ, նշանակելով երկու ամիս ժամանակ պսակի դէմ արգելք յայտնելու համար, և յայտարարելով ծխական քահանայի անունն ու բնակութեան տեղը, որին նա դիմել է ծանուցումն անելու և պսակելու մասին: Եթէ նշանակւած երկամսեայ ժամանակամիջոցում ոչոքի կողմից արգելք չի յայտարարւի, քահանան կատարում է պսակը, նախապէս պահանջելով պսակւել ցանկացող իրեն անձանօթ կողմից գրաւոր յայտնութիւն այն մասին, որ իր պսակի մասին ոչ մի օրինական արգելք չկայ

III Ամուսնալուծութեան մասին

139. Այն ամուսնութիւնները որ կապւած են 126,
130 յօդւածների մտքի հակառակ, ինչպէս և նախկին օրինական ձեռվ չլուծւած պսակի դոյտթեան ժամանակ, ճանաշւում են անվաւեր:

140. Ամուսնութիւնը լուծւում է, եթէ ամուսիներից մէկը անհաւատարիմ է:

141. Եթէ ամուսիներից մէկը կամայականօրէն տարակայում է անյայտ կերպով երեք տարի շարունակ, միւս ամուսինը իրաւունք ունի խնդրել լուծել իր ամուսնութիւնը:

142. Ամուսնութիւնը կարող է լուծել, եթէ արգելք կայ նրա գլխաւոր նպատակին—երեխայ բերելուն յետագայ գէպքերում 1. երբ կողմերից մէկը յամառ կերպով, չնայած ծխական քահանայի յորդորներին, ամբողջ տարւայ ընթացքում հրաժարում է ամուսնական պարտաւորութիւններ կատարելուց, նրա համար չունենալով բաւարար պատճառներ. 2. երբ կողմերից մէկը գիտմամբ արգելք է լինում յդիանալուն. 3. որ կողմերից մէկը ոչ թէ իր տարիքի, այլ ուրիշ պատճառներով լիովին անընդունակ է կենակցութեան, և այս (անընդունակութիւնը) անկարութիւնը կար մինչի պատկր կամ թէն առաջ է եկել նաև յետոյ, բայց ինքն է մեղաւոր: Այս պատճառով ստկայն, ամուսնալուծութիւն խնդրել թոյլ է տրւում՝ ամուսիներից մէկի ամուսնական կենակցութեան մարմնական անկարութեան եղեան գալուց երկու տարի յետոյ:

143. Կողմերից մէկի խնդիրքով լուծւում է նոյնակես, եթէ միւսը վարակւած է անբուժելի վարակիչ և չափաղանց զգւելի հիւանդութեամբ, որը նա չունէր, կամ որը նա ծածկում էր մինչի ամուսնական:

144. Կողմերից մէկի խնդիրքով ամուսնութիւնը լուծում է նոյնպէս, եթէ օրինաւոր քննութեամբ ապացուցած է, որ միւս կողմը խելացնոր է եղել կամ կատաղութիւն է գալիս վրան, և որ մասւոր ընդունակութիւնների այդ կորուստը տեսում է տարբուց աւելի երժշկի վկայութեամբ առողջանալու յոյս չկայ: Այս գէպքում այն կողմը որ ամուսնալուծութիւն է պահանջում, պարտաւոր է Կախապէս ապահովել տառապող կողմի ապրուստը, եթէ այդ վերջինը չունի իր սեփական բաւարար կարողութիւն:

145. Եթէ կողմերից մէկը բոլորովին վչացած վարք ունի, և մինչի այն տոտիձան ենթակայ է արքեցութեան, անմիտ վասնելու կամ անբարոյականութեան, որ ամբողջ կարողութիւնը վշանում է, միւս կողմը իրաւունք անի խնդրել ամուսնալուծութիւն, բայց այն ժամանակ միայն, եթի նրան ուղղելու համար ձեռք առած բոլոր միջոցները մնում են ապաբղիւն:

146. Վատ վարեցողութիւնը, միայնած հայհոյանքի, ծեծի կամ այլ զգալի վիրաւորանքների հետ, անմեղ տառապող կողմին տալիս է ամուսնալուծութեան իրաւունք, եթէ ամուսիներին հաշտեցնելու բոլոր չանքերը և նոյն իսկ ժամանակաւոր անջատումը կլինին ահօգուտ:

147. Ամուսնութիւնը կարող է լուծել, 1, եթէ կողմերից մէկը շաբ գիտաւորութեամբ թողել է միւսին և չի համաձայնում վերապառնալ նրա մօտ. 2. եթէ կինը

յամառ կերպով հրաժարւում է հետեւ իր ամսունուն
գէպի նրա պաշտօնի և աշխատանքի բնակութեան տե-
ղը. և 3) եթէ ամուսիններից մէկը դատապարտւած է
իրաւոնքներից զրկւելու և արսորի:

148. Ամուսնութիւնը լուծւելուց յիտոյ, անմեղ կող-
մը իրաւոնք է ստանում նորից ամուսնանալու, իսկ
յանցաւոր կողմին, նայելով նրա յանցաւորսութեան աս-
տիճանին, թոյլ է արւում ամուսնանալ 1—3 ամիս եկե-
ղեցական ապաշխարանք կրելուց յիտոյ: 1)

Ծանօթութիւն:

1) Վանի դեռ որոշ քակաքացիական գործեր—ամսանական,
գպրոցական և այլն եկեղեցու հետ են կապւած, ժողովրդի մաս-
նակցութիւնն այդ գործերում անհրաժեշտ է. որից պարզ է, թէ նա-
խագիծս ինդրի սկզբունքային լուծումն չէ առաջարկում, այլ ժա-
մանակաւոր Կորպաւորումն՝ ժողովրդի լայն միջումտութեամբ:

ԱՐՍԵՆ ՎԵՐԳՈՎԻԿԵՏ ՊԼԱԺԵՄՆ

1. Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քայլացիական պրակ 1904 թ. զինը 75 հ.
2. Միջազգային իրաւունք 1904 թ. » 50 »
3. Կանոնը ներսեսի և ներշապուհի 1905 թ. » — »
4. Կանոնը Պարտաւի ազգային ժողովը 1905 թ. » — »
5. Նախագիծ Հայաստ. եկեղ. սահմանադրութեան 1906 թ. » 7 »

—○○; ○○—